384.- 1835.— Այս է տապան հանգստեան *ՍԱՂՄԿԱՑԻ ՋՐԴԻԿԱՆՑ ՓԻԼՕԻ* որդի *ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ* որ հանգեաւ ի Քս. թվին ՌՄՀԴ (1835) ին:

385.- 1835.— Այս է տապան հանգստեան *ԱՆՋՐԴԵՑԻ ԲՈՒՐՍԱՅԱՆԿԱՑ ՄՀԻ ՄԻՆԱՍԻ* որդի *ՄԿՐՏԻՋԻՆ* որ հանգեաւ ի Քս. 1284 (1835) օգոստոս? 9:

386.- 1839.— Այս է տապան հանգստեան *ԱՐԱԲԳԻՐՑԻ ԵԶԵԿԻԱՑ ՄՀԻ ԿԱՐԱՊԵՏԻ* որդի *ՄՀԻ ՅԱԿՈԲԻՆ* որ հանգեաւ թվ. Հայոց 1288 (1839) ին նոյեմբերի ա. ին:

387.- 1844.— Այս է տապան հանգստեան *ԱԻԱԳ ՍԱՐԿԱՒԱԳ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ* որ հանգեաւ ի Քս. թվին ՌՄՂԳ (1844): Ած. ողորմի:

388.- 1844.— Այս է տապան նուաստիս *ՅԱԿՈԲԻ* որդի *ԹՈՐՈՍԻ*. տեսողք տապանիս տուք զողորմին. թւն 1844 ին:

389.- 1849.— Այս է տապան հանգստեան *ԷՐԷՑԻՍԷՆՑ* (*Ռայիսեան*) յարգի *ՊՕՂՈՍ ԱՂԱՅԻ* որդի *ՄԱՐՏԻՐՈՍ ԱՂԱՅԻ ԱԿՆՑՈՑ*, որ հանգեաւ ի Քս. ի թվին 1849:

390.- 1849.— Այս է տապան հանգստեան *ՄՀԻ ԲԱՐՍԵՂ ԱՂԱՅԻՆ* որ հանգեաւ ի Քս. ի թվին 1849, որ *ԿԵՍԱՐԱՑԻ*:

391.- 1850.— Այս է տապան *ՏԻՎՐԻԿՑԻ* թերզի...*ՊՕՂՈՍԻՆ*. թվին Հայոց ՌՄՂԹ (1850), սեկտեմբեր 11:

գ.— ԱԶԳ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ՇԷՅԽ ՄԱԳՍՈՒՏԻ

Երբ Հալէպի Քաղաքապետութեան կողմէ 1927 *Փետրուար մէկին, վերջնապէս փակուեցան Ազիզիյէի քրիստոնէից գերեզմանատները եւ յաջորդ օրուընէ սկսեալ քրիստոնեայք իրենց ննջեցեալները սկսան փոխադրել քաղաքին հիւսիսարեւմտեան անկիւնը, դէպի Ճէզիրէ երկարող երկաթուղւոյ գծին անդին կողմը, Շէյխ Մագսուտի Նոր գերեզմանատանց մէջ, Հայերը վաղուց լեցուցած էին սակայն իրենց յատկացուած բաժինը, երբ* 1915 *ի աղէտալի օրերուն, Յուլիսի եւ Օգոստոսի սաստիկ արեւին տակ, Թուրքիոյ ամէն կողմերէն Հալէպ հասնող տարագիր կարաւաններու մէջ կ'սկսէին պատահիլ ամէն տեսակի հիւանդութիւններ եւ բնականաբար համատարած մահեր: Քաղաքապետութիւնը Ազիզիյէի գերեզմանատանց մէջ խճողում յառաջ չբերելու հոգածութեամբ, քաղաքին դուրսը գետին մը սահմանած էր, ուր ամէն օր, հարիւրաւոր դժբախտ հայեր, կ'իջնէին ցած փոսերու մէջ. ու վրանին հապճեպով հողը կը ծածկուէր: Զորումէն Հալէպ տարագրուող ողբացեալ Անանիա քհնյ. Տիվանեան, զինադադարի յաջորդող տարիներուն կը պատմէր որ* 20 *հազար հայ նահատակներու վրայ աղօթած է, Հալէ-*